

ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ
ԱՐԵՎԵԼԱԳԻՏՈՒԹՅԱՆ ՖԱԿՈՒԼՏԵՏ

ԱՐԵՎԵԼԱԳԻՏՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԵՐ

ВОПРОСЫ ВОСТОКОВЕДЕНИЯ

JOURNAL OF ORIENTAL STUDIES

*Նվիրվում է պրոֆեսոր
Գուրգեն Մելիքյանի 85-ամյակին*

№ 20

ԵՐԵՎԱՆ
ԵՊՀ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ
2021

**Հրատարակվում է Երևանի պետական համալսարանի
արևելագիտության ֆակուլտետի
գիտական խորհրդի որոշմամբ**

Խմբագրական խորհուրդ՝

Մելքոնյան Ռուբեն պ.գ.դ., պրոֆեսոր (խմբագիր)

Մելիքյան Գուրգեն բ.գ.թ., պրոֆեսոր

Խառատյան Ալբերտ պ.գ.դ., պրոֆեսոր, ՀՀ ԳԱԱ թղթակից-անդամ

Սաֆրաստյան Ռուբեն պ.գ.դ., պրոֆեսոր, ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս

Հովհաննիսյան Լավրենտի բ.գ.դ., պրոֆեսոր, ՀՀ ԳԱԱ թղթ.-անդամ

Հովհաննիսյան Դավիթ բ.գ.թ., պրոֆեսոր

Սաֆարյան Ալեքսանդր պ.գ.թ., պրոֆեսոր

Ոսկանյան Վարդան բ.գ.թ., դոցենտ

Քոչարյան Հայկ պ.գ.թ., դոցենտ

Սարգսյան Լևոն պ.գ.դ., պրոֆեսոր

Կարապետյան Ռուբեն պ.գ.դ.

Տեր-Սաթևոսյան Վահրամ պ.գ.դ.

Գրեկյան Երվանդ պ.գ.դ.

Րեպենկովա Մարիա բ.գ.դ., պրոֆեսոր (Ռուսաստան)

Կուզնեցով Վասիլի պ.գ.թ., դոցենտ (Ռուսաստան)

Էքմեքչյան Լեոնա PhD (ԱՄՆ)

Իլյա Յակուբովիչ բ.գ.դ., պրոֆեսոր (Գերմանիա)

Ահմադջան Ղուրոնբեկով բ.գ.դ., պրոֆեսոր (Ուզբեկստան)

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Քննարկի Միոգոյան

ԳՈՒՐԳԵՆ ՄԵԼԻՔՅԱՆ – 85.....7-9

Արաբագիտություն

Հայկ Քոչարյան, Մոհամմեդ Հաջ Իբրահիմ

«ԱՀԱԲԵԿՉՈՒԹՅԱՆ ՀԱՅԵՑԱԿԱՐԳԸ 21-ՐԴ ԴԱՐՈՒՄ.
ԱՀԱԲԵԿՉՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆՄԱՆ, ՏԵՍԱԿԱՆ ՈՒ
ԻՐԱՎԱԿԱՆ ՁԵՎԱԿԵՐՊՄԱՆ ԽՆԴԻՐՆԵՐԸ»
ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆ (ՄԱՍ Բ)10-21

Մերի Չիլիսիյան

«ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆԸ» ԴՈՒՐԱՆՈՒՄ. IHYĀ’ AL-MAWĀT
ՀԱՅԵՑԱԿԱՐԳԻ ՍԱՀՄԱՆՈՒՄԸ22-29

Հարություն Մայժևոյան

ԱՄՆ-Ի ԱՐՏԱՔԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆ ՈՒՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ
ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆԸ ԾԱՅՐԱՀԵՂԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԴԵՍ
ՊԱՅՔԱՐՈՒՄ («ԱԼ-ԿԱԻԴԱ»-Ի ՕՐԻՆԱԿՈՎ).....30-39

Մոհամմեդ Հաջ Իբրահիմ

ԱՀԱԲԵԿՉՈՒԹՅԱՆ ԴԵՍ ՊԱՅՔԱՐԻ ԻՐԱՎԱԿԱՆ
ՇՐՋԱՆԱԿԻ ՄՇԱԿՈՒՄԸ 9/11-ԻՑ ՀԵՏՈՒ40-46

Համիկ Երիցյան

ԲԱԶՄԱՍՇԱԿՈՒԹՅՈՒՆՈՒԹՅՈՒՆԸ՝ ՈՐՊԵՍ
ՀԱՆՐԱԼԵԶՎԱԲԱՆԱԿԱՆ ԻՐԱԴՐՈՒԹՅԱՆ ՁԵՎՎՈՐՄԱՆ
ԳՈՐԾՈՆ (ԱՐԱԲԱԿԱՆ ՄԻԱՅՅԱԼ ԷՍԻՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ
ՕՐԻՆԱԿՈՎ).....47-54

Թյուրքագիտություն

Վարուժան Գեղամյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԵՎ ՀԱՅՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԹՈՒՐԹԻԱՅԻ
ՊԵՏԱԿԱՆ ԽՈՍՈՒՅԹԻ ԵՎ ՀՈՒՏՈՐԱԲԱՆՈՒԹՅԱՆ
ՀԻՄՆԱԿԱՆ ԴՐՈՒՅԹՆԵՐԸ 2019-2021ԹԹ.....55-71

Մարիամ Մելքոնյան

ՀԱՅԱՏՅԱՑՈՒԹՅԱՆ ԴՐՄԵՎՈՐՈՒՄՆԵՐՆ ՈՒ «ԱՏԵԼՈՒԹՅԱՆ ԽՈՍՔՆ» ԻԼՀԱՄ ԱԼԻԵՎԻ ԵԼՈՒՅԹՆԵՐՈՒՄ..... 72-86

Ռաֆիկ Խաչատրյան

1974 թ.-ի ԿԻՊՐՈՍ ԹՈՒՐԶԱԿԱՆ ՆԵՐԽՈՒԺՈՒՄԸ ԵՎ ՆՐԱ ՆԱԽԱԴԻՅԱԼՆԵՐԸ..... 87-98

Գառնիկ Դավթյան

ՆԱԽԱԳԱՀԱԿԱՆ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՊԱՏԿԵՐԸ ԱԴԻԲԵՋԱՆՈՒՄ..... 99-105

Թամարա Աղանյայան

ՊԱՆԹՅՈՒՐՔԻՍՏ ԳՐՈՀԱՅԻՆՆԵՐԸ ԹՈՒՐԶԻՎՅՈՒՄ. «ԿՈՄԱՆԴՈՍՆԵՐԻ ՃԱՄԲԱՐՆԵՐԻ» ԿԱԶՄԱՎՈՐՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՅԸ, ՆՊԱՏԱԿԸ, ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ (1968-1971 թթ.)..... 106-117

Իրանագիտություն

Լիանա Պետրոսյան

ԻԻՀ-ՈՒՄ ԹԱԼԻՇ ՆԱՀԱՆԳԻ ՍՏԵՂԾՄԱՆ ՆԵՐՔԱՂԱՔԱԿԱՆ ԽՈՍՈՒՅԹԸ Մ. ԱՀՄԱԴԻՆԵԺԱԴԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՏԱՐԻՆԵՐԻՆ..... 118-123

Անի Նահապետյան

ՀՐԵԱՆԵՐԸ ԿՅՈՒՐՈՍ Բ ՄԵԾԻ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐՈՒՄ ԵՎ ՎԵՐՁԻՆԻՍ ԿԵՐՊԱՐՆ ԱՍՏՎԱԾԱՇՆՉՈՒՄ..... 124-140

Նարե Գևորգյան

ԻԻՀ ՊԵՏԱԿԱՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՓՈՐՁԱԳԵՏՆԵՐԻ ԽՈՐՀՐԴՈՒՄ ԱԼԻ ԱՔԲԱՐ ՀԱՇԵՄԻ ՌԱՖՍԱՆՋԱՆԻԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ..... 141-152

Յասեր Քարամզադե Հաֆթխանի

ԹԱԼԻՇԱԿԱՆ ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ՊՈԵԶԻԱՅԻ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆ..... 153-160

CONTENT

<i>Knarik Mirzoyan</i> Gurgen Melikyan - 85.....	7-16
---	------

Arabic Studies

<i>Hayk Kocharyan, Mohammed Haj Ibrahim</i> “PARADIGM OF TERRORISM IN THE 21ST CENTURY: A CRITICAL INVESTIGATION INTO THE DEFINITIONAL, THEORETICAL AND LEGAL FRAMEWORKS ASSOCIATED WITH TERRORISM” SURVEY (PART TWO).....	10-21
--	-------

<i>Meri Chplakhyan</i> «AGRICULTURE» FROM THE PERSPECTIVE OF AL-QUR’AN. DEFINITION OF THE CONCEPT: «IHYĀ’ AL-MAWĀT».....	22-29
--	-------

<i>Harutyun Matevosyan</i> US FOREIGN POLICY CHANGE IN STRUGGLE WITH ISLAMIC EXTREMISM (EXAMPLE OF AL-QAEDA).....	30-39
---	-------

<i>Mohammed Haj Ibrahim</i> EVOLVING LEGAL FRAMEWORKS IN COUNTERING TERRORISM AFTER 9/11.....	40-46
---	-------

<i>Hasmik Yeritsyan</i> MULTICULTURE AS A FACTOR FOR FORMING SOCIOLINGUISTIC SITUATION (EXAMPLE OF THE UNITED ARAB EMIRATES).....	47-54
--	-------

Turkic Studies

<i>Varujan Geghamyan</i> MAIN THESES OF TURKEY’S STATE DISCOURSE AND RHETORIC ABOUT ARMENIA AND ARMENIANS IN 2019-2021.....	55-71
--	-------

<i>Mariam Melkonyan</i> DEMONSTRATIONS OF ARMENOPHOBIA AND	
---	--

"HATE SPEECH" IN THE TALKS OF ILHAM ALIYEV.....	72-86
<i>Rafik Khachatryan</i> THE CYPRUS TURKISH INVASION OF 1974 AND ITS PRECONDITIONS.....	87-98
<i>Garnik Davtyan</i> AZERBAIJANI ELECTION OVERVIEW.....	99-105
<i>Tamara Aghamalyan</i> PANTURKIST MILITANTS IN TURKEY: THE PROCESS OF FORMULATION, AIMS, ACTIVITY OF THE CAMPS OF COMMANDOS.....	106-117

Iranian Studies

<i>Liana Petrosyan</i> THE DOMESTIC POLITICAL DISCOURSE ON THE FORMATION OF TALYSH PROVINCE IN THE ISLAMIC REPUBLIC OF IRAN DURING THE REIGN OF M. AHMADINEJAD.....	118-123
<i>Ani Nahapetyan</i> JEWS IN THE GREAT POLITICAL PROGRAMS of CYRUS II AND THE LATEST CHARACTER IN "THE BIBLE"	124-140
<i>Nare Gevorgyan</i> THE ROLE AND ACTIVITY OF ALI AKBAR HASHEMI RAFSANJANI IN THE ASAMBLEA OF EXPERTS OF PUBLIC ADMINISTRATION OF THE ISLAMIC REPUBLIC OF IRAN.....	141-152
<i>Yaser Karamzadeh Haftkhani</i> AN INVESTIGATION OF THE STRUCTURE OF TALYSHI FOLK POETRY.....	153-160

Հարություն Մաթևոսյան¹

**ԱՄՆ-Ի ԱՐՏԱՔԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆ ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ
ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆԸ ԾԱՅՐԱՀԵՂԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԴԵՄ
ՊԱՅՔԱՐՈՒՄ («ԱԼ-ԿԱԻԴԱ»-Ի ՕՐԻՆԱԿՈՎ)**

Բանալի բառեր՝ ԱՄՆ, «ալ-Կաիդա», ջիհադ, Իրաք, Աֆղանստան, Մաուդյան Արաբիա, սեպտեմբեր 11-ի իրադարձություններ, «Տալիբան»

20-րդ դարի կեսերից իսլամը և իսլամական շարժումները սկսեցին հսկայական դեր ստանձնել մուսուլմանական երկրների քաղաքական կյանքում: Այն սկսեց հանդես գալ տարբեր ձևերով և միջոցներով: Որոշ առաջնորդների հաջողվեց օգտագործել իսլամը՝ ընդլայնելու իրենց լեգիտիմությունը, կառավարման ձևը և իրականացրած քաղաքականությունը: Քաղաքական կուսակցությունները կիրառեցին իսլամը՝ մոբիլիզացնելու սոցիումի բավականին մեծ զանգվածներ: Սրանց զուգահեռ իսլամական ծայրահեղական կազմակերպությունները (այս ձևակերպումը հիմնականում վերաբերում է սալաֆիական² շարժումներին) օգտագործեցին իսլամը բռնություն իրականացնելու անվան տակ, այդ թվում, նաև հարձակվելով կառավարությունների ներկայացուցիչների վրա և ահաբեկելով հասարակությանը:

Ջիհադի գորալիզացիան 20-րդ դարի վերջին տեղի ունեցավ երկու հիմնական ուղղություններում՝ կրոնական գաղափարներում և ռազմական պայքարում, այսինքն, մի կողմից այն Դուրանի հիմնական կրոնական սկզբունքներից մեկն է, ջանք թափել դեպի Աստծուն հասնելու ճանապարհին, ըստ էության, այն ունի հոգևոր կարևոր նշանակություն, իսկ մյուս կողմից ջիհադի գաղափարը օգտագործվում էր ազատության պայքարի, ահաբեկչության, ծայրահեղական գաղափարների արդարացման և իրենց հետևորդներին մոտիվացնելու համար: Փաստացի, ջիհադական

¹ ԵՂՀ արևելագիտության ֆակուլտետի արաբագիտության ամբիոնի մագիստրատուրայի ուսանող. էլ. փոստ՝ harutyun.matevosyan@ysumail.am

² Սալաֆիականությունը իսլամական բարեփոխումների հոսանք էր, որը ձևավորվեց Եգիպտոսում 19-րդ դարի վերջում, և որի նպատակն էր իսլամի վերադարձը Մուհամմադ մարգարեի, առաջին չորս խալիֆների և ուղղափառ նախնիների ժամանակաշրջանի իսլամական ավանդույթներին (տե՛ս The Encyclopedia of Islam, New Edition, Under patronage of the international union of academics., Leiden., E. J. Brill., 1995., p. 900)

շարժումը տեղափոխվեց ազգային մակարդակից միջազգային, ավելի համընդհանուր մակարդակի:

Այս գործընթացներին զուգահեռ հասարակա-քաղաքական և տնտեսական որոտներում մուսուլմանական աշխարհիկ վարչակարգերի գործունեության ձախողումը բերում էր իսլամական արմատականության (ֆունդամենտալիզմ³) ակտիվացմանը, սկսվում էին ձևավորվել ծայրահեղական կազմակերպություններ, որոնք պատրաստ էին բացահայտ և ոչ բացահայտ ձևերով պայքարել մուսուլմանական վարչակարգերի դեմ: Ինքնին միջազգային ահաբեկչությունը այս արմատական ուժերի պատճառով սկսեց ավելի մեծ բնույթ կրել՝ դառնալով համաշխարհային քաղաքակրթությանը սպառնացող և ս մեկ գործոն: Նման խոշորամասշտաբ սպառնալիքը չէր կարող անմասն թողնել տարածաշրջանում որոշակի շահեր ունեցող երկրների արտաքին քաղաքական ուղղությունների վերամշակման համա: Ծայրահեղականության ակտիվացումը Մերձավոր Արևելքում մեծապես ազդեց Միացյալ Նահանգների արտաքին քաղաքական գործունեության վրա ոչ միայն այս տարածաշրջանում, այլ ողջ աշխարհում ևս: Ակնհայտ է, որ այս փոփոխությունների մեկնարկը «պաշտոնապես» տրվեց սեպտեմբերի 11-ին տեղի ունեցած ահաբեկչություններից⁴ հետո, սակայն այստեղ

³ Ֆունդամենտալիզմ հասկացությունը ձևավորվել է ԱՄՆ-ում քրիստոնեության բողոքական ուղղության մեջ: 1895 թ. Նիագարայում տեղի ունեցած Աստվածաշնչյան կոնֆերանսում հոգեւորականների մի խումբ առաջ քաշեց 5 հիմնական «ֆունդամենտալ» սկզբունք: Այդ սկզբունքները 1910 թ. հաստատեց Դրեքսիտերական գլխավոր ասամբլեան, որն ընդունեցին մի շարք այլ պահպանողական կրոնական կազմակերպություններ: 1909-1915 թթ. Կալիֆորնիայում Ռ. Թորրին եւ Լ. Դիկսոնը տպագրեցին 12 հատորից բաղկացած հոդվածների ժողովածու՝ «The Fundamentals» անվամբ, որտեղ մեկնաբանվում էին այդ թեգերը: 1919 թ. այդ սկզբունքները առավել ընկալելի եւ ըմբռնելի դարձ-ներու համար 12 հատորը հավաքեցին 4 հատորի մեջ եւ հիմնականում անվճար շարունակեցին դրա տարածումն ամբողջ ԱՄՆ-ով եւ աշխարհով մեկ: Երկրորդ համաշխարհային պատերազմից հետո ամերիկյան ֆունդամենտալիստները իրենք իրենց կոչեցին ավետարանչականներ, իսկ ֆունդա-մենտալիզմ տերմինը մնաց շրջանառության մեջ եւ իր նեղ իմաստով մեկնաբանվում է որպես աստվածաբանական շարժում, որը նպատակաուղղված է պահպանելու այն ամենը, ինչն իրենից ներկայացնում է քրիստոնեության հիմք (ֆունդամենտ) (տե՛ս Филатов С. В., «Фундаментализм». Возвращение к основам, Протестантский фундаментализм, М., 2003, стр. 109-126):

⁴ Սեպտեմբերի 11-ի ահաբեկչական հարձակումներ՝ կողորհնացված մահապարտ ահաբեկիչների հարձակումներ՝ որոնք տեղի են ունեցել Ամերիկայի Միացյալ Նահանգներում: Հարձակումները տեղի են ունեցել «ալ-Կաիդա» ահաբեկչական կազմակերպության անդամների կողմից: 2001 թվականի սեպտեմբերի 11-ին չորս ահաբեկչական խմբերի առևանգում են չորս մարդատար ինքնաթիռներ: Ահաբեկիչները երկու ինքնաթիռ բախվում են Համաշխարհային առևտրի

գլխավոր հիմնախնդիրը այն էր, որ այս գործընթացների տրանսֆորմացիան կապված էր հենց այս ահաբեկչությունների հետ, կամ սա ավելի վաղ մեկնարկած գործընթաց էր, որի պաշտոնական հիմնակետը դարձավ այս իրադարձությունները:

Անհնար է ժխտել ԱՄՆ-ի քաղաքական, այդ թվում նաև ռազմական ներկայության կտրուկ ավելացումը «բնական ռեսուրսներով հայտնի» այս տարածաշրջանում 20-րդ դարի վերջին: Հատկանշական է, որ Սառը պատերազմից հետո՝ երկբևեռ աշխարհակարգի փլուզումը, զսպող բևեռի բացակայությունը ԱՄՆ-ի սեփական քաղաքական և ռազմական ներկայությունը Մերձավոր Արևելքում դարձրեց ավելի ակնառու, իսկ «ահաբեկչության դեմ պատերազմը» ստացավ այս ողջ գործընթացների հիմնավորման գլխավոր գործիքակազմը: «Ահաբեկչության դեմ պատերազմը» այս ընթացքում դարձավ Բուշ կրտսերի նախագահության շարունակականության ապահովման որոշիչ և կենսական հարցը, ինչը վերաճեց հստակ քաղաքական ուղենիշի: Շատ հետազոտողներ այն համեմատում են, ինչպես 1941 թ.-ի (երբ Ամերիկան հրաժարվեց մեկուսացումից), 1947 թ.-ի (երբ զսպումը դարձավ արտաքին քաղաքականությունը դիտարկող ռալյնակը), կամ 1989թ.-ի հետ (երբ սկսվեց «հետսառալատերազմյան դարաշրջանը»):⁵ Այս եզրույթը առաջին անգամ գործածության դրեց հենց Ջ. Բուշ կրտսերը, ով իր ուղերձի⁶ ժամանակ օգտագործեց այս եզրույթը, նշելով, որ ԱՄՆ-ն իր բոլոր միջոցներով պայքարելու ահաբեկչության և հատկապես «ալ-Կաիդա»⁷ կազմակերպության և նրա ղեկավար Ուսամա բեն Լադենի դեմ:

Ուստի, եթե ԱՄՆ-ի առաջնահերթությունները կտրուկ փոխվում են, հետևաբար պետք էր իրականացվեր, ինչպես փոխգիջումային քաղաքականություն մի շարք երկրների հետ հարաբերություններում, այնպես էլ լինել անգիջում ահաբեկչական

կենտրոնի աշտարակին, որը տեղակայված է Նյու Յորք քաղաքում: Ադետի հետևանքով, աշտարակը փլուզվում է և հրդեհի է բռնկվում: Երրորդ ինքնաթիռը (չվերթ 77 American Airlines) մխրնվում է Պենսազոնի շենքի մեջ, որը տեղակայված է մայրաքաղաք Վաշինգտոնում: Չորրորդ օդանավի ուղևորները և անձնակազմի անդամները փորձել են կանխել ահաբեկիչներին, ինչի հետևանքով ինքնաթիռն ընկել է Փենսիլվանիայում:

⁵ Phil H. Gordon., “September 11 and American Foreign Policy”, Brooking Edu., November 1, 2001 <https://www.brookings.edu/articles/september-11-and-american-foreign-policy/>

⁶ Տես, <https://www.youtube.com/watch?v=WA8-KEnfWbQ>

⁷ «Ալ-Կաիդա»՝ ծայրահեղական-արմատական ահաբեկչական կազմակերպություն, որը պատկանում է իսլամի վահաբիստական ուղղությանը: Ստեղծվել է դեռևս Աֆղանական պատերազմի ժամանակ Ուսամա բեն Լադենի կողմից:

կազմակերպությանը աջակցող երկրների նկատմամբ: Պարզ էր, որ խնդիրը ցածր մակարդակի վրա գտնվող խնդիր չէր, ուստի ԱՄՆ-ն որպես տերություն պիտի ունենար համընդհանուր կողափցիա իր պայքարը ահաբեկչության դեմ կազմակերպելու նպատակով, սա ենթադրում էր, ինչպես Ռուսաստանի հետ համագործակցության նոր փորձեր, օրինակ, ՆԱՏՕ-ի ընդլայնման քաղաքական ծրագրից կարճ ժամանակով հրաժարվելը: Պակիստանի հետ բանակցություններ սկսելը կարող է նշանակել տնտեսական պատժամիջոցների չեղարկում, պարտքերի վերացում և Քաշմիրի նկատմամբ չեզոք դիրքի պահպանում՝ չնայած Հնդկաստանի հետ ԱՄՆ հարաբերությունների ջերմացմանը: Չինաստանի աջակցության կարիքը դժվարացնում է Թայվանին եռանդով աջակցելը, հակաիրթիռային պաշտպանությանը պայմանագրերին անցնելը կամ հրապարակայնորեն քննադատել Պեկինի մարդու իրավունքների վերաբերյալ գործելակերպը: Իսկ ամենակարևորը լինելու էր արաբական պետությունների, հատկապես Եգիպտոսի, Հորդանանի և Սաուդյան Արաբիայի անփոխարինելի աջակցությունը սպասելու դժվարությունը. նրանց բնակչությունը կարող էր դեմ լինել Միացյալ Նահանգների հետ համագործակցությանը այնքան ժամանակ, քանի դեռ Վաշինգտոնը կպահպանի Իսրայելի ակտիվ աջակցությունը և Իրաքի դեմ պատժամիջոցները:

Այսպիսով, Միացյալ Նահանգները իր քաղաքական առաջնահերթությունների փոփոխությունը ի ցույց դրեց երեք «ճգնաժամերի» ձևավորմամբ.

- Ամերիկյան և կոալիցիոն ուժերի ներխուժում Աֆղանստան, պատերազմ «Տալիբան»-ի դեմ

- Ամերիկա-պակիստանա-սաուդական ծայրահեղ լարված հարաբերություններ

- Ամերիկյան զինված ուժերի ներխուժումը Իրաք, Սադամ Հուսեյնի իշխանության տապալում

Այս իրադարձությունները ոչ միայն հանդես էին գալիս որպես ամերիկյան նոր ձևավորվող քաղաքականության արդյունք, այլ ձևավորեցին մի նոր իրավիճակ տարածաշրջանում, որի վերաբերյալ տարածաշրջանային պետությունները ևս պետք է ունենային հստակ դիրքորոշում և ստանձնեին որոշակի պատասխանատվություն:

Դեռևս 2001թ. հոկտեմբերին արդեն պարզ էր, որ «ալ-Կաիդա»-ի առաջնորդը գտնվում էր Աֆղանստանում՝ «Տալիբան»-ի ճամբարներում, ուստի ԱՄՆ հատուկ ծառայությունները

բանակցություններ սկսեցին բեն Լադենին ստանալու համար⁸: Առաջին մերժումներից հետո հոկտեմբերին սկսվեց առաջին խոշոր ներխուժումը Աֆղանստան, որտեղ այս գործողությունների ընթացքում զոհվեց մոտ 140 հազար աֆղանցի:

Այս ընթացքում ԱՄՆ իշխանությունները կոշտ դիրքորոշում ընդունեցին պակիստանյան իշխանությունների հետ հարաբերություններում, քանզի նրանց համարում էին որպես «Տալիբան»-ի գլխավոր հովանավորներից մեկը: Պակիստանը իր միջազգային հեղինակությունը պահպանելու և տնտեսական պատժամիջոցներից հեռու մնալու համար պատրաստ էր գնալ ցանկացած քայլի՝ աջակցելու Արևմուտքին⁹: Այն նաև խնդիր ուներ անվտանգություն և խաղաղություն ապահովել իր արևմտյան սահմաններին: Սրան զուգահեռ Պակիստանը արևմտյան դաշնակիցներ ձեռք բերելու ուղղությամբ քայլեր էր կատարում և պատահական չէր, որ նախագահ Մուշարաֆը առաջարկեց պակիստանյան հատուկ ծառայությունների մի խմբով ներխուժել Աֆղանստան՝ բեն Լադենին որոնելու: Մակայն սա ևս ներքին անհամաձայնությունների պատճառ հանդիսացավ և տեղի չունեցավ:

Այն սկզբունքը, որը դրվել էր ամերիկյան դիվանագիտական գործընթացների համատեքստում, թույլ չէր տալիս տարածաշրջանային երկրներին չեզոք դիրքերից հանդես գալ: Ակնհայտ է, որ նախագահ Բուշը ավելի վաղ կտրուկ գործողություններ կձեռնարկեր, եթե ունենար միջազգային գործընկերների գոնե պաշտոնական աջակցությունը ահաբեկչության դեմ պայքարում: Ուստի, ԱՄՆ-ն, առաջնահերթ, դիվանագիտական խողովակներով պիտի փորձեր ստանալ երկու պետությունների աջակցությունը:

Դիվանագիտական գործընթացների համատեքստում փակուղային վիճակի մեջ էին գտնվելու հենց այս երկու պետությունները, որոնք ոչ ֆորմալ, սակայն որոշ «խոշոր» անհատների մակարդակով աջակցությունն էին հայտնում ահաբեկիչներին: Խոսքը գնում է աֆղանական ճակատում Պակիստանի, իսկ արաբական աշխարհում Մաուդյան Արաբիայի մասին: Այս «ճգնաժամի» սկզբից հստակ պահանջ դրվեց պակիստանյան իշխանության դեմ դադարեցնել աջակցությունը «Տալիբան»-ի ռեժիմին: Ակնհայտ էր, որ «ալ-Կաիդա»-ն ոչնչացնելու

⁸ Jane Corbin, “Al Qaeda, In search of the Terror Network that Threatens the World”, New York., 2002., p.249

⁹ Bill Gertz., “Breakdown”., Washington DC, 2002., pp. 3-10

համար Պակիստանը որևէ կերպ չպետք է հանդես գար որպես աջակցող գործոն, դրանով մեծապես վնասներ կտուժեր այս կազմակերպությունը: Իսկ Պակիստանի նախագահ՝ գեներալ Փերվազ Մուշարաֆին այլ բան չէր մնում անել, քան լուռ համաձայնել այս գործողություններին: Սակայն այստեղ լուրջ խնդիրներ առաջացան ոչ թե իշխանությունների բացահայտ չաջակցման հետևանքով, այլև նրա, որ բեն Լադենը ուներ մեծ աջակցություն տարածաշրջանում ապրող մուսուլմանների շրջանում:

Ինչ վերաբերում է Սաուդյան Արաբիային, ապա իրավիճակի պատկերը ճշգրտորեն ներկայացնում է սաուդցի արքայազն Բանդար բին Մուլթանը, խոսելով ահաբեկչության մասին, նշում է, որ կարծես այդ երկու աշտարակները փլվել են իր գլխում¹⁰: Նա այսպես է նկարագրում այն պահը, երբ Ջորջ Թենեթը¹¹ զանգահարում է իրեն և տեղեկացնում, որ այդ ահաբեկիչներից 15-ը ծագումով Սաուդյան Արաբիայից են: Սաուդական դեսպանատունը որոշեց սիմվոլիկ որոշ քայլեր կատարել, քանի որ կար ԱՄՆ-ում լարվածություն մուսուլմանների նկատմամբ, պատահական չէր, որ սաուդցի միլիարդատեր Ալ Ուալեդ բին Թալալը 10 միլիոն դոլլար է նվիրաբերում է Նյու Յորք քաղաքին¹²: Իրականում ԱՄՆ իշխանությունների և սաուդական ընտանիքի միջև կար ճգնաժամ, որը ավելի խորացավ հատկապես այն ժամանակ, երբ սաուդցիները մերժեցին թույլ տալ ամերիկյան զինված ուժերին օգտագործել տեղի ռազմական բազաները՝ հարվածներ հասցնելու Աֆղանստանում գտնվող ահաբեկչական ուժերին: Այս լարվածության պատճառներից մեկը հանդես էր գալիս նաև բեն Լադենը, ով գտնվելով միջազգային հետախուզման մեջ, այդպես էլ չձերբակալվեց սաուդական իշխանությունների կողմից: Մրան գումարած 9/11 ահաբեկչության 19 մասնակիցները հենց սաուդցիներ էին, ուստի սա ևս որոշակի խոչընդոտ պիտի հանդիսանար երկկողմ հարաբերություններում:

Ընդհանրապես, սաուդցիների կողմից ԱՄՆ-ի ընկալումը Ծոցի ճգնաժամից հետո լրջագույն փոփոխությունների ենթարկվեց: Տարբեր սոցիալական հարցումներ, ցույց էին տալիս, որ սաուդցիների մեծամասնությունը ողջունում է 9/11-ի ահաբեկչությունը, և պատահական չէր, որ բեն Լադենը նաև որոշակի աջակցություն էր

¹⁰ Տե՛ս, <https://www.newsweek.com/saudi-game-149629>
¹¹ Ջորջ Թենեթը 1997-2004 թթ.-ին եղել է ԱՄՆ ԿՀՎ ղեկավարը:
¹² Հետագայում Նյու Յորքի քաղաքային իշխանությունը մերժեց այդ նվերը կապված բին Թալալի կատարած հայտարարությունների հետ: Մրա մասին Թալալը խոսել է իր հարցազրույցներում, տե՛ս "New York Rejects Saudi Millions.". BBC News. 12 October 2001.

ստանում հենց սաուդցիների կողմից: Մաուդական իշխանությունները, սակայն, ի տարբերություն Պակիստանի փորձում էին կատարել ամեն քայլ ամերիկյան կողմին աջակցելու նպատակով, սակայն դրանք ապարդյուն էին, քանզի հասարակական տրամադրությունները չէին ներկայացնում այն պատկերը, ինչը ուներ տեղի բնակչությունը: Ստեղծված իրավիճակը, իհարկե, կապված էր մի շարք աշխարհաքաղաքական գործոնների հետ, ինչպես օրինակ ամերիկյան ռազմական ուժերի ներկայությունը Մաուդյան Արաբիայում, տեղի բնակչության դժգոհությունը: Իսկ ինչ վերաբերում է իսլամական գործունին, ապա կրոնականների համար անընդունելի է, որ մուսուլմանական սուրբ քաղաքները գտնվում են «անհավատաների» օկուպացիայի տակ:

Հաջորդ «ճգնաժամային» խնդիրը դա Իրաք ներխուժումն էր: Այն տեղի ունեցավ 2003թ.-ին, սակայն այն հանդիսանում էր ընդհանուր գործընթացի կարևոր բաղադրիչ: Հետաքրքրական է այն, որ Բուշի վարչակազմի մի շարք անդամներ 9/11-ի ահաբեկչություններից հետո, կոչ էին անում նախագահին ամերիկյան զորքերի ներխուժումը իրականացնել Իրաք, այլ ոչ Աֆղանստան, որտեղ, ըստ հավաստի տեղեկությունների, գտնվում էր «ալ-Կաիդա»-ի առաջնորդ Ուսամա բեն Լադենը: Ի վերջո, երկարատև քննարկումներից հետո որոշում կայացվեց ռազմական գործողությունները սկսել Աֆղանստանից, խնդիր դրվեց ոչնչացնել բեն Լադենին, իսկ հետո անցնել, այսպես կոչված ահաբեկչություն «ծնող» գործոնների չեզոքացման, ինչը օրինակ Պենտագոնի զեկույցների համաձայն հանդիսանում էր սադամյան իշխանությունը Իրաքում:

Ըստ տարբեր սոցիոլոգիական հարցումների՝ ամերիկացիների մոտ 70%-ը կողմ էր Իրաք ներխուժման որոշմանը: Բուշի վարչակազմի շատ կարևոր դերակատարներ հանդես էին գալիս Մադամ Հուսեյնին իշխանությունից հեռացնելու ջատագովներ, նույնիսկ մինչև Բուշի՝ նախագահի պաշտոնում ընտրվելը: Ըստ տարբեր պնդումների՝ սեպտեմբերի 11-ը ապահովեց քաղաքական «պատուհան»՝ Մադամ Հուսեյնին պաշտոնանկ անելու երկար սպասված ծրագիր իրականացնելու համար: 9/11-ի ահաբեկչությունները ծառայում են որպես իրադարձությունների հիմնակետ՝ գործողությունների մեծ թափ ապահովելու համար: Սրա մասին են վկայում այն, որ վարչակազմի քայլերը լայն քննադատություն չգտավ քաղաքական ասպարեզում, քանի որ

հասարակության շատ քիչ հատվածներ էին վիճարկում Իրաք ներխուժելու քայլը¹³:

Այնուամենայնիվ, նախագահ Բուշը երբեք էլ հրապարակային չմեղադրեց Սադամ Հուսեյնին 9/11-ի ահաբեկչությունները կազմակերպելու համար: Սակայն Իրաքի և «ալ-Կաիդա»-ի միջև հետևողականորեն կապի ներկայացումը ինքնին հանգեցնելու էր նաև Իրաքի դեմ որոշակի գործողությունների իրականացմանը¹⁴: Ոստի, պատահական չէր, որ նրա ելույթներում տեքստերը կազմվում էին այնպես, որ այս երկու անձնավորությունները՝ Սադամը և Հուսեյնը և բեն Լադենը, դիտարկվում են միևնույն համագործակցության գծի վրա, անկախ նրանից նման համագործակցություն կար կողմերի միջև թե ոչ: Աջակցության կտրուկ աճը, որը ստացավ նախագահ Բուշը սեպտեմբերի 11-ի դեպքերից հետո, քաջալերեց իր վարչակազմի ավելի կոշտ դիրքորոշմանը Իրաքի նկատմամբ: Ինչպես նշվեց վերևում, բազմաթիվ ապացույցներ հուշում են, որ Բուշի վարչակազմի անդամները մտահոգված էին Իրաքում ռեժիմի փոփոխությամբ ավելի քան մեկ տասնամյակ: Ուստի, սեպտեմբերի 11-ի հարձակումները ծառայեցին որպես հիմնարար իրադարձություն, որը առիթ ստեղծեց Իրաքի դեմ երկար սպասված գործողությունները սկսելու համար:

Հատկանշական էր նախագահի վարկանիշի փոփոխությունը, որը, մինչ այս հարձակումները, ամերիկացիների շրջանում կազմում էր մոտ 50%: Իրաք ներխուժումից հետո այն նրա վարկանիշը հասավ գրեթե 90%-ի: Նրանք նաև նշում են, որ սեպտեմբերի 11 -ի հետևանքով Բուշը ստացել է պատմության մեջ ցանկացած նախագահի ամենաբարձր վարկանիշը, և նրա հայրենասիրական աջակցության աստիճանը, կարծես, ավելի երկար տևեց, քան նախորդ նախագահներին: Այսպիսով, պետք է նշել, որ ԱՄՆ քաղաքականության համար կտրուկ փոփոխության հաջորդ արդյունքը դա իրաքյան պատերազմն էր: Պատերազմի արդյունքները, ի վերջո, գոհացուցիչ չէին և մինչ օրս էլ այս արդյունքների վերաբերյալ քննարկումները շարունակվում են, սակայն Իրաքյան պատերազմի սկզիբը, արտաքին քաղաքական

¹³ Michael J. Mazarr, “The Iraq War and Agenda Setting”, Foreign Policy Analysis, Vol. 3, No. 1, 2007, pp. 1—23

¹⁴ Amy Gershkoff and Shana Kushner, “Shaping Public Opinion: The 9/11-Iraq Connection in the Bush Administration’s Rhetoric”, Perspectives on Politics, Vol. 3, No 3 (September 2005), pp. 525—537

փոփոխություններ կատարելու անհրաժեշտության արդյունք հանդիսացավ¹⁵:

Այսպիսով, ծայրահեղականության աճը տարածաշրջանում բերեց ԱՄՆ արտաքին քաղաքական փոփոխությունների, որը մեծ աջակցություն ստացավ նաև հանրության կողմից: Նախքան որևէ քաղաքականություն կյանքի կոչելը անհրաժեշտ է մոբիլիզացիոն գործընթաց, որը ներառում է նախընտրելի քաղաքականություններին հանրության աջակցությունը մեծացնելու ջանքեր: Ահա սա էր, ինչը թույլատրեց ԱՄՆ-ին կարճ ժամկետում, սակայն արդյունավետ քայլեր կիրառել Մերձավոր Արևելքում: Օբյեկտիվորեն Աֆղանստան ներխուժումը, արաբա-սաուդական լարված հարաբերությունները և Իրաքյան պատերազմը շատ հաճախ դիտարկվում են միմյանցից անկախ, սակայն Բուշի վարչակազմը արտաքին քաղաքականության այս երեք հիմնախնդիրները համախմբեց մակրոանվտանգության մեկ շրջանակում: «Ահաբեկչության դեմ պատերազմը» գաղափարով ամերիկյան իշխանությունը կտրուկ փոփոխեց քաղաքական գիծը Մերձավոր Արևելքում, որը պիտի հիմք հանդիսանար նոր անվտանգային միջավայրի ձևավորմանը: Իսկ այս փոփոխությունը պիտի հանգեցներ մի քանի այլ ազդեցությունների, որոնց արդյունքները մինչև օրս էլ շարունակվում է քննարկման առարկա հանդիսանալ տարբեր փորձագիտական շրջանակներում:

US FOREIGN POLICY CHANGE IN STRUGGLE WITH ISLAMIC EXTREMISM (EXAMPLE OF AL-QAEDA)

Harutyun Matevosyan
(Summary)

The rise of extremism in the region led to changes in US foreign policy, which also received great support from the public. Before any policy can be implemented, a mobilization process is needed, which includes efforts to increase public support for preferred policies. This is what allowed the United States to take effective steps in the Middle East in the short term. Objectively, the invasion of Afghanistan, the tense Arab-Saudi relations և The Iraq War are often viewed independently, but the Bush administration has combined these three foreign policy issues into one macro-security framework with the idea of the "War on terror", the

¹⁵ Daniel Masters, *Prospecting for War: 9/11 and Selling the Iraq War*, Contemporary Security, 2008., pp. 30-35

American government drastically changed the political line in the Middle East, which was to be the basis for the creation of a new security environment and this change should have led to several other effects, the results of which are still the subject of discussion in various expert circles.

ИЗМЕНЕНИЕ ВНЕШНЕЙ ПОЛИТИКИ США В БОРЬБЕ С ИСЛАМСКИМ ЭКСТРЕМИЗМОМ (ПРИМЕР АЛЬ-КАЕДЫ)

Արտյուն Մաթեոսյան
(Резюме)

Рост экстремизма в регионе привел к изменениям во внешней политике США, которые также получили большую поддержку со стороны общественности. Прежде чем можно будет реализовать какую-либо политику, необходим процесс мобилизации, который включает усилия по увеличению общественной поддержки предпочтительной политики. Это то, что позволило США в краткосрочной перспективе предпринять эффективные шаги на Ближнем Востоке. Объективно вторжение в Афганистан, напряженные арабо-саудовские отношения и Войну в Ираке часто рассматривают независимо, но администрация Буша объединила эти три внешнеполитических вопроса в одну структуру макробезопасности. С идеей «войны с терроризмом» американское правительство резко изменило политическую линию на Ближнем Востоке, которая должна была стать основой для создания новой среды безопасности. И это изменение должно было привести к ряду других эффектов, результаты которых до сих пор обсуждаются в различных экспертных кругах.